Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
09/11/2026 թվականի N 459-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2026 թվականի նոյեմբերի 09-ից

«Բանկի 35 ամյակին նվիրված» արշավի պայմաններ /Պայմաններ/

1. Ընդհանուր դրույթներ.

1. **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 10.11.2026թ-ից 30.12.2026թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
2. **Քարտեր՝** Արշավի շրջանակներում Idram&IDBank հավելվածի և idbanking.am հարթակի միջոցով պատվիրվող՝ սույն արշավի պայմաններում նշված վճարային քարտեր:
3. **Հաճախորդ՝** Ֆիզիկական անձ, ով Բանկի հետ կնքել/կնքում է քարտի ձեռքբերման Պայմանագիր
4. Արշավին մասնակցելու դեպքում Հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

1. Այն ֆիզիկական անձինք, ովքեր Արշավի գործողության ընթացքում Idram&IDBank հավելվածի կամ idbanking.am հարթակի միջոցով կպատվիրեն Visa Travel, Visa-Wizz Air, Visa Signature դեբետային, Visa Infinite դեբետային և MasterCard World վճարային որևէ քարտ, կստանան նշված քարտերից յուրաքանչյուրի առաջին տարվա սպասարկման վճարի 35% զեղչ:
2. Արշավը գործում է 10.11.2026թ-ից 30.12.2026թ-ը ներառյալ:
3. Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով սույն արշավի պայմաններում նշված վճարային որևէ քարտի պատվիրման պահին և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
4. Արշավի շրջանակում Հաճախորդի կողմից պատվիրվող քարտերի քանակը չի սահմանափակվում: